









ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 15:42 15/03/2018 ՀԱՅԱՍՏԱՆ

# Երևանում արևելյան ուտեստներ առաջարկող նոր սննդի կետ կբացվի

Երևանում ապրիլի վերջին կբացվի միջինարևելյան ուտեստներ առաջարկող նոր սննդի կետ: Հայաստանում Ճապոնիայի դեսպանատունը և «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ-ն մարտի 14-ին ստորագրեցին «Ալեպպո Քուիզին» կենտրոնին տրամադրվող դրամաշնորհի պայմանագիրը:

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Էյջի Տագուչին նշեց, որ Ճապոնիայի կառավարությունը, համատեղելով իր ջանքերը միջազգային կառույցների հետ, կարողանում է իր ուրույն նպաստն ունենալ Հայաստանում գտնվող փախստականների բարօրության ապահովման գործում: Դեսպանի համոզմամբ՝ այս ծրագրին աջակցելը մի նոր էջ է բացում իրենց գործունեության մեջ: Տագուչին հույս հայտնեց, որ իր նոր էջում «Ալեպպո Քուիզին»-ը միայն հաջողություններ կունենա:

«Հալեպ» ՀԿ գործադիր տնօրեն Սարգիս Բալխյանը նշեց, որ այս ծրագրի հիմնական նպատակն է սիրիացի փախստականների, մանավանդ սիրիահայ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծումը:

Նա ասաց, որ նախապես եղել են անհատական նվիրատվություններ, Սբ Գևորգ եկեղեցու ծխական խորհրդի ջանքերով սկզբնական գումարները հայթայթվեցին, մոտավորապես 84 հազար դոլարով տարածք գնեցին, ապա սկսեցին քննարկումները տարբեր կազմակերպությունների հետ: Նրանց օժանդակեցին նաև ՄԱԿ-ի փախստականների գրասենյակը, GIZ կազմակերպությունը: Բալխյանն ասաց, որ տարածքի շինարարական ծախսերը հովանավորելու համար Ճապոնիայի դեսպանատունը մոտ 40 635 դոլար ներդրում պիտի ունենա:
Շինարարության մոտ 70 տոկոսն արդեն ավարտված է, մինչև ապրիլի կեսերը շինարարական աշխատանքները կավարտվեն, աշխատակազմը 15 օր փորձաշրջան կանցնի, ապրիլի 30-ին կամ մայիսի 1-ին էլ նախատեսվում է բացել սննդի կետը:

Հարցին՝ ինչո՞վ է տարբերվելու իրենց ռեստորանը միջինարևելյան ուտեստներ առաջարկող այլ ռեստորաններից՝ Բալխյանը պատասխանեց, որ այդ ուտեստները պահանջարկ ունեն, սակայն այդ ռեստորանների հիմնական հաճախորդները սիրիահայեր են և սփյուռքահայեր, բայց ոչ՝ բնիկ հայաստանցիներ:

«Մենք վստահ ենք, որ կկարողանանք շահագրգռել ու սիրաշահել տեղացի Հայաստանցիներին էլ, որ գան, այս խոհանոցից օգտվեն: Բնականաբար, այս խոհանոցի առանձնահատկությունն այն է, որ անհատական բիզնես չէ, ծրագիր է, որի նպատակը աշխատատեղեր ստեղծելն է, ու հասույթը պետք է բարեսիրական նպատակների ուղղվի՝ սիրիացի փախստականների, այլ խոցելի բնակչությանն օգնելուն, հաշմանդամություն ունեցող անձանց և այլն»,- ասաց նա: Ռեստորանը նաև աշխատատեղերի հնարավորություն է ստեղծում. սկզբնական շրջանում աշխատողների թիվը սահմանափակ կլինի՝ 10 հոգի, սակայն երբ բիզնեսը զարգանա, Բալխյանը նշեց, որ այստեղ կկարողանան գործ գտնել մոտավորապես 70-90 հոգի:

Նա ասաց, որ իրենց խոհանոցում ուտելիքները պատրաստվելու են, լինելու է մոտ 4-5 սեղան, որտեղ այցելուները կնստեն, բայց իրենց հիմնական նպատակն է, որ սուպերմարկետներում իրենց արտադրանքի սառեցված տարբերակը վաճառվի, այն, ինչ այլ ճաշարաններում հնարավոր չէ գտնել: Գներն այստեղ մատչելի են լինելու, բայց ոչ այնքան, որ փասեն այլ սիրիահայ գործարարների բիզնեսին:

## ԼՐԱՀՈՍ

14:24
Այսօր Լոքյան Դավիթը որևէ խնդիր չունի. նախարարն իր պաշտոնանկության մասին

14:22
Նախագահը ներկա է գտնվել «ԱրմՀայԹեք-2018» միջազգային ցուցահանդեսի բացմանը

14:20
ԾՈ Կոտայքի բաժանմունքում արդեն 3-րդ անգամ կաշառքով վարորդական իրավունքի վկայական են տրամադրում

14:14
Ռուսաստանը վարկային նոր համաձայնագրով Հայաստանին զենքի մատակարարումը կսկսի այս տարի

14:00
Փորձագետ. «Թուրքիան միջուկային զենք կստեղծի 10-20 տարվա ընթացքում»

13:55
Արցախի ԱՆ-ն հրապարակել է պայթյունի հետևանքով վիրավորների անունները

13:50
Ազնավուրի թոյլտվությամբ «Հայր Գորիո»-ի հայերեն թարգմանության շապիկին կադր է նրա մասնակցությամբ ֆիլմից

13:47
Սերժ Սարգսյանը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ

13:35
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվել են Ավագ հինգշաբթիի արարողությունները

13:28
Փարաքարում առաջին էկո-պուրակը կբացվի

13:25
«HALO Trust»-ը՝ Ղազանչիում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ

13:04
Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջացառումներն այս տարի կանցկացվեն սեպտեմբերի 29-ին և 30-ին

12:53
Կառավարությունը բնակարան կնվիրի Սերժ Սարգսյանին

12:44
Մանե Թանդիլյանն առաջարկում է եկամտահարկի վերադարձը կիրառել նաև ոչ նորակառույց բնակարանների ձեռքբերման դեպքում

12:40






Տեսնել բոլոր լուսանկարները

Հավանել 2 Tweet

Աղբյուր՝ Panorama.am

...մ սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև սեղմելով Ctrl-Enter:

**0 մեկնաբանություն** Տեսակավորել ըստ **Նորագույնները**


Մեկնաբանություն ավելացնել...

Facebook Comments Plugin

«Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի լիազորությունները կփոխանցվի կառավարությանը

12:32
«Վաղը կարող է, ասենք, թռչող տեսանկարահանող սարք կիրառվել»

12:18
Պետք է այնպիսի մեխանիզմ դնենք, որ բիզնեսի համար որևէ խոչընդոտ չստեղծվի. վարչապետը՝ բնապահպանության նախարարին

12:15
Սուրբ Զատիկին ընդառաջ. ինչպես ընտրել անվտանգ հավկիթ

12:07
Բակո Սահակյան. Ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ Արցախ՝ ընդունելով նրա իրավազորությունը

12:02
Դավիթ Բաբայան. Պայթյունի հետևանքով երեք արցախցի է զոհվել

12:00
Աղբահանության պայմանագրի կնքման ու հավաքագրման մասով պայմանագրերի թիվը դեռևս բավարար չէ. վարչապետ

11:55
Արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված հողամասերի կոորդինատների անճշտություններ. վարչապետ

11:46
Մարզպետարանների գործունեության պլանային իրատեսական ցուցանիշները ոչ ամբողջությամբ են իրականացվել. Վարչապետ

11:42
ԱԻՆ. Հզոր ցիկլոնի հետևանքով կլինեն առատ տեղումներ, քամու ուժգնացում

11:35
Կեմերովոյի հրդեհից տուժածների թիվը հասել է 79-ի

11:31
Բակո Սահակյանը Mirror-Spectator-ին. «Խաղաղ գործընթացի հաջողության համար Արցախը պետք է լինի լիարժեք բանակցային կողմ»

11:26
Արցախում պայթյունից տուժածները վիրահատվում են

11:11
Արցախում տեղի ունեցած ականի պայթյունը կապ չունի պաշտպանության բանակի հետ. Սենոր Հասրաթյան

10:54
Կոնվերս Բանկը խաղարկում է UEFA Չեմպիոնների Լիգայի եզրափակչի տոմս

10:44
Boeing ընկերությունը հայտարարել է հաքերային հարձակման մասին